

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

2012 թվականի ՀՀ ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

«ՀՀԿ-ն գոհ է ընտրությունների արդյունքից: Մեր կարծիքով, հասարակությունը նույնպես գոհ է»:

**Էդուարդ Շարմազանով,
Հայաստանի Հանրապետական կուսակցություն**

«Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունները շարունակում են գտնվել մեր հանրության ուշադրության կենտրոնում: Այսօր ես իմ երախտիքն ու շնորհակալությունն եմ հայտնում բոլոր այն քաղաքացիներին, ովքեր հավատացին ինձ ու իմ թիմին և իրենց ձայնը տվեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը»:

**Գագիկ Ծառուկյան,
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն**

«2012 թվականի մայիսի 6-ը՝ Հայաստանի ժողովրդի ազատ կամարտահայտման եւ երկրում ժողովրդավարության հաղթանակի օր դառնալու փոխարեն նշանավորվեց պետականորեն կազմակերպված եւ ընտրակեղծարարության ծավալով իր նախադեպը չունեցող կեղծված խորհրդարանական ընտրություններով»:

«Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինք

«Թեև ընտրատեղամասերում ընտրական գործընթացի բուն ընթացքը, ինչպես նաև նախընտրական քարոզչության ընթացքում հեռուստատեղերի օգտագործման համեմատաբար հավասար պայմանների ապահովումը կարելի է գնահատել որպես առաջընթաց նախորդ բոլոր ընտրությունների համեմատ, այդուհանդերձ, ընտրատեղամասերից դուրս իրականացված զանգվածային ընտրախախտումները ստվերեցին ընտրությունների օրինականությունն ու լեգիտիմությունը»:

«Ժառանգություն» կուսակցություն

«Ընտրությունները չարձանագրեցին ժողովրդի կամքը և քաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը: Պարզ դարձավ, որ համընդհանուր ընտրախախտումները ծրագրավորված էին և տեղի ունեցան տեղամասային կենտրոններից դուրս՝ մայիսի 6-ին և նախորդող օրերին»:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն

«Ընտրությունները Հայաստանում առաջին անգամ անցել են առանց լցոնումների և ծեծկոտուքների, ձայների հաշվարկը հիմնականում կատարվել է թափանցիկ և կուսակցությունների վերահսկողության ներքո: Շնորհակալություն եմ հայտնում նաև զանգվածային լրատվական միջոցներին ընտրաբաշխման մասնակցող քաղաքական ուժերի քարոզարշավը համակողմանի լուսաբանելու համար, ինչը 2012թ. համապետական ընտրությունների կարևորագույն ձեռքբերումներից է»:

**Արթուր Բաղդասարյան,
«Օրինաց Երկիր» կուսակցություն**

«2012թ. մայիսի 6-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնք, ցավոք, չեն կարող խթան հանդիսանալ երկրի իրական ժողովրդավարացման գործընթացների համար եւ չեն վկայում ընտրությունների ինստիտուտը բարեփոխելու՝ իշխանությունների քաղաքական կամքի մասին»:

Հասարակական 11 կազմակերպությունների համատեղ հայտարարություն

«ԱՄ ընտրությունները կայացան ազատ, բաց և մրցակցային՝ համապատասխան դեմոկրատական նորմերին, իսկ ընտրախախտումներից հատկապես կարելի է մատնանշել անձնագրերից կնիքների ցնդելու փաստը»:

ԱՊՀ դիտորդական առաքելություն

«Հայաստանի Հանրապետությունում 2012թ. մայիսի 6-ի Ազգային ժողովի ընտրությունները հատկանշվել են մրցակցային, ակտիվ և հիմնականում խաղաղ քարոզարշավի դրսևորմամբ, սակայն թե նախընտրական շրջանում, թե քվեարկության օրը տեղ են գտել խախտումներ: Կուսակցությունների և հասարակության զգալի մասի ընդհանուր թերահավատությունը ընտրական գործընթացների ամբողջականության հանդեպ մտահոգության լուրջ առիթ է»:

**ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ ,
ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով և Եվրոպական խորհրդարան**

«Ընտրողների ցուցակների ճշգրտությունը և ընտրողների նկատմամբ ճնշումների բացակայությունը թե նախընտրական շրջանում, և թե քվեարկության օրը ճիշտ ընտրությունների նախադրյալներն են: 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների ընթացքում չի հաջողվել ապահովել վերը նշված նախադրյալները»:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽՄԿ)

«Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրություններում մեծ առաջընթաց է արձանագրվել: Մեծ առաջընթաց մի քանի առանցքային ուղղություններում՝ լրատվամիջոցներից օգտվելու առումով վիճակը շատ ավելի լավ էր, քան նախկինում, և սա լավ բան է, ընտրատեղամասերում ամեն ինչ ըստ կարգի էր եւ թափանցիկ, հանձնաժողովների անդամները պատրաստված էին, ընտրատեղամասերում տեսախցիկներ էին տեղադրված: Միևնույն ժամանակ, որոշ խնդիրներ շարունակում են մնալ, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդները դրանք հստակորեն նշել են: Ընտրակաշառքները եւ վարչական ռեսուրսի չարաշահումը շարունակում են մնալ լուրջ խնդիր: Ուստի դեռ որոշակի աշխատանքի անհրաժեշտություն կա հաջորդ ընտրություններից առաջ»:

**Ջոն Հեֆերն,
Հայաստանում ԱՄՆ դեսպան**

«Ի հավելումն այս և այլ գնահատականների, ստորև կներկայացվեն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գնահատականները 2012 թվականի Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ: Այս արտահերթ զեկույցը կազմելիս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը առաջին անգամ հնարավորություն ունեցավ ստանալ և կուտակել նման ծավալի տեղեկություններ և փաստեր առաջնային աղբյուրներից, քանի որ առաջին անգամ Պաշտպանի աշխատակազմը ուներ թե՛ զծի արդեն ճանաչելի 116 կարճ համարը, արագ արձագանքման տասնյակ խմբեր, մարզային գրասենյակներ և այլ էական ռեսուրսներ: Այդ ամենը հնարավոր դարձավ Եվրոմիության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում երկու ընտրական փուլերին» ծրագրի շրջանակներում: ԵՄ/ ԵԱՀԿ աջակցությամբ իրականացված ծրագրի մասին հետագայում կներկայացվի առանձին հաշվետվություն»:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է 25 ահազանգեր, որոնք վերաբերել են ընտրողների ցուցակներում առկա անճշտություններին: Ստացված ահազանգերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ բողոքները հիմնականում վերաբերել են ցուցակներում ընդգրկված, սակայն մահացած, Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող և տվյալ հասցեում գրանցված բնակարանի նախկին սեփականատեր հանդիսացող անձանց:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված քաղաքացի Ս.Ս.-ի դիմումի համաձայն՝ ընտրացուցակներում տեղ գտած տվյալները որոշ դեպքերում չեն համապատասխանում իրականությանը, ավելին՝ ցուցակներում առկա են նաև ընտրելու իրավունք չունեցող անձինք՝ անչափահասներ, դատարանի վճռով անգործունակ ճանաչված, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիներ: Ի տարբերություն 2008թ.-ի նախագահական ընտրությունների ժամանակ կազմված ընտրողների ցուցակների, 2012թ.-ի խորհրդարանական ընտրությունների ընտրացուցակներում ներառվել են ավելի շատ թվով ընտրողներ: Նշված խնդրի կապակցությամբ հաղորդում է ներկայացվել ՀՀ դատախազություն: Այդ հաղորդման կապակցությամբ, դատախազության կողմից կատարված հայտարարության համաձայն՝ 2008թ. փետրվարից հետո ընտրողների ռեգիստրից դուրս եկած և նոր ընդգրկված ընտրողների քանակական տարբերությունը 2012թ. ապրիլի դրությամբ համապատասխանում է փաստացի վիճակին:

Դիմումներից մեկին Պաշտպանի միջամտությամբ դրական լուծում է տրվել: Այսպես, քաղաքացի Ա.Ա.-ն 2012 թվականի ապրիլի 13-ին Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 2005թ.-ից ընտրություններին չի կարողանում մասնակցել հաշվառում չունենալու պատճառով: Այդ խնդրի կապակցությամբ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի՝ քաղաքացուն պարզաբանվել է բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու կարգը, հաշվառվել, փաստաթղթավորվել է ՀՀ քաղաքացու անձնագրով և ընդգրկվել է ընտրողների ռեգիստրում: Ստացված մնացած ահազանգերը չեն համապատասխանել իրականությանը և/կամ հերքվել են:

Ընտրողների ցուցակները կազմվում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (այսուհետ՝ ԱՎՎ) կողմից, որը պատասխանատու է ընտրողների ռեգիստրի վարման և պահպանման համար, իսկ ընտրողների ռեգիստրը հիմնված է քաղաքացիների հաշվառված բնակության վայրի վրա: Համաձայն «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների՝ այն դեպքերում, երբ փոփոխվում է քաղաքացու հաշվառման վայրը, քաղաքացին է կրում պարտավորություն այդ մասին տեղեկացնել իրավասու պետական մարմնին: Համաձայն նույն օրենքի դրույթների՝ այն դեպքերում, երբ գրանցվում է քաղաքացու մահվան

փաստը, իրավասու պետական մարմինը (ՀՀ արդարադրության նախարարություն) պարտավորվում է տեղեկացնել այդ մասին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը:

ՀՀ փոխոստիկանապետի կողմից մայիսի 2-ին արված պաշտոնական հայատարարության համաձայն ցուցակների անճշտությունների վերաբերյալ Ոստիկանությունը ստացել է 6.411 տեղեկություն, որոնցից Ոստիկանության կողմից ձեռք բերված և մշակված տեղեկությունները թվով 3.592-ն են, այլ աղբյուրներից՝ 2.819-ը: Ոստիկանությունից հայտնել են նաև, որ ընդհանուր տեղեկություններից 5.668-ը վերաբերել են ընտրողների ռեգիստրում առկա մահացած անձանց, 413-ը՝ հաշվառված, սակայն ընտրացուցակում չընդգրկված անձանց, 175-ը՝ հաշվառում չունեցող, սակայն ընտրացուցակում ընդգրկված անձանց և շուրջ 155-ը եղել են անհատական տեղեկություններ, մասնավորապես հասցեների կամ կրկնվող անձերի: Ուղղումներ են կատարվել 3.818 անձանց հետ կապված տվյալների դեպքում, որոնցից մահացած անձանց մասին 3.795 տեղեկություններից հերքվել է 1.883-ը, 413 դեպքով չհաշվառված, սակայն ընտրացուցակում ընդգրկված բոլոր տեղեկությունները հերքվել են, 175 հաշվառում չունեցող, սակայն ընտրացուցակում ընդգրկված անձանց տեղեկություններից միայն 5 դեպք է հաստատվել, իսկ սխալ հասցեների կամ կրկնվող դեպքերի 155 անհատական տեղեկություններից հաստատվել է 18 դեպք: Փոխոստիկանապետը նշել է նաև, որ մահացած անձանց ցուցակում ընդգրկելը հիմնականում սահմանված ձևով մահը չգրանցելու և վատ վարչարարության արդյունք է:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները

Ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրության անվստահության էական պատճառներից մեկը ընտրողների ցուցակների անճշտություններն են, և ընտրական ցուցակներում Հայաստանից երակարատև բացակայող անձանց տվյալների պահպանումը: Հայաստանում երկար ժամանակ փաստացի չբնակվող անձանց տվյալները ընտրողների ռեգիստրում պահպանելը օրենքի պահանջն է: Մահացած անձանց անունները ընտրական ցուցակներում պահպանելը ըստ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության եղել է ծրագրային ապահովման խնդիր, որը մինչ ընտրությունների օրը շտկվել է: Ընտրական ցուցակների այլ անճշտությունները՝ ոստիկանության ոչ լիարժեք աշխատանքի հետևանք է: Ընտրական ցուցակների հետ կապված նշված խնդիրներն ինքնին չեն վկայում ընտրակեղծարարության մասին, սակայն այդ խնդիրները քաղաքական շահարկումների առիթ են տալիս և խորացնում հանրության անվստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ: Միևնույն ժամանակ այդ խնդիրների առկայությամբ ձևավորված ընտրական ցուցակները կարող են լայն հնարավորություններ ստեղծել ընտրակեղծարարության համար:

Շատ դրական է ոստիկանության կատարած լայնածավալ աշխատանքը, որի արդյունքում այս ընտրությունների ընթացքում չափազանց փոքր է եղել այն անձանց թիվը, ովքեր ունենալով քվեարկելու իրավունք՝ չեն ընդգրկվել ընտրական ցուցակներում: Բացի այդ, ոստիկանությունը դրսևորել է ընտրական ցուցակների հետ կապված բոլոր իրավաչափ պահանջներին և հիմնավոր տեղեկություններին արձագանքելու աննախադեպ պատրաստակամություն: Ողջունելի է նաև ոստիկանության հրապարակային գործելաձևը ընտրական ցուցակների առնչությամբ ծագած բոլոր խնդիրների դեպքերում:

Հաշվի առնելով նշված հանգամանքներն անհրաժեշտ է շարունակել դրական միտումները ոստիկանության աշխատանքներում և սկսել հանրային քննարկումներ Հայաստանում երկար ժամանակ չբնակվող անձանց ընտրական ռեգիստրից հանելու նպատակով օրենսդրական փոփոխությունների ընդունման հնարավորությունների վերաբերյալ:

Արտահերթ զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների հիման վրա:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄ

Ազգային Ժողովի պատգամավորության թեկնածու կարող է առաջադրվել քսանհինգ տարին լրացած, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Միայն երկու դեպքերում ՀՀ քաղաքացիները՝ ցանկանալով գրանցվել որպես Ազգային Ժողովի պատգամավորի թեկնածու, ՀՀ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից մերժում ստացել են վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու պահանջը չբավարարելու հիմքով: Խաչատուր Սուքիասյանը, ցանկանալով գրանցվել որպես Ազգային Ժողովի պատգամավորի թեկնածու, թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստացել է մերժում 10 ամիս և 20 օր անդադար արտերկրում գտնվելու պատճառով: Նման խնդիր է գրանցվել նաև Էդուարդ Մադաթյանի դեպքում, ում գրանցումը մերժվել է, քանի որ Է. Մադաթյանը վերջին 5 տարում ՀՀ-ում մշտապես չի բնակվել:

Խ. Սուքիասյանը՝ համաձայն չլինելով այդ որոշման հետ, դիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ նշելով որ «բնակչության վայր» եզրույթի իրավաբանական մեկնաբանումը տրվում է ոչ թե «Բնակչության պետական ռեզիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշմամբ, այլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ըստ որի՝ բնակչության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է: Հայտնել է նաև, որ նա մեկնել է արտերկիր ոչ թե բնակվելու, այլ՝ կազդուրվելու և հանգստանալու նպատակով: Խ. Սուքիասյանը ելնելով վերոգրյալ փաստարկներից պնդել է, որ «Բնակչության պետական ռեզիստրի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումը չի հանգեցնում անձ՝ ընտրական իրավունքի սահմանափակումների: Մակայն Վարչական դատարանը մերժել է Խ. Սուքիասյանի հայցադիմումը՝ անփոփոխ թողնելով թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը:

Պատգամավորի թեկնածուի գրանցման խնդրով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմում է ստացել թիվ 19 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրված Հակոբ Հակոբյանի կողմից: Վերջինս դիմումով հայտնել է, որ նույն ընտրատարածքում պատգամավորի թեկնածու առաջադրված Սեդրակ Մարոյանը տևական ժամանակով՝ 2010թ. մայիսի 15-ից մինչև 2011թ. նոյեմբերի 30-ը, բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, սակայն թիվ 19 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին է ներկայացրել կեղծ փաստաթղթեր: Հ. Հակոբյանի ներկայացրած դիմումի հիման վրա Պաշտպանը հարցում է ուղարկել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը և պարզվել է, որ Ս. Մարոյանի՝ վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանից բացակայելու յուրաքանչյուր դեպքում անընդմեջ բացակայության ժամանակահատվածը չի գերազանցել առավելագույնը 81 օրը, ինչը՝ ելնելով ՀՀ ոստիկանության պարզաբանումից, չի կարող հիմք հանդիսանալ մշտական

Արտահերթ գեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի և արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների գեկույցների հիման վրա:

բնակության վայրի փոփոխության, հետևապես նաև՝ վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու պայմանը բավարարած չհամարելու համար:

Պատգամավորության թեկնածու առաջադրվելու և հետագայում ինքնաբացարկ հայտնելու 18 դեպք է գրանցվել, որոնցից խնդրահարույց է եղել զանգվածային լրատվության միջոցներով լայն հնչեղություն ստացած Մերուժան Մխոյանի ինքնաբացարկի դեպքը: Այսպես, Մ. Մխոյանը իր թեկնածությունն առաջադրել էր Արմավիրի մարզի թիվ 21 ընտրատարածքում, սակայն որոշ ժամանակ անց, առանց պատճառաբանության կամ մեկնաբանության, ինքնաբացարկ է հայտնել: Համաձայն հրապարակումների Մ. Մխոյանի ինքնաբացարկ հայտնելու պատճառ է հանդիսացել նրա նկատմամբ ճնշումների գործադրումը, որը սակայն Մ. Մխոյանը հերքել է:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները

Պատգամավորի թեկնածուների առաջադրման և գրանցման գործընթացը այս ընտրություններում ընդհանուր առմամբ գոհացուցիչ է, ինչը հնարավորություն է ընձեռել ունենալ իրապես մրցակցային ընտրություններ:

Այդուհանդերձ, պատգամավորության թեկնածուների գրանցման համար սահմանված նստակցության ցենզը դեռևս օրենսդրությամբ հստակեցման կարիք ունի: Հասկանալի և մասամբ ընդունելի է ներկայիս օրենսդրության մեկնաբանումն ու կիրառումը ՌՀՀ և վարչական դատարանի կողմից: Սակայն, քանի որ «բնակության վայր» եզրույթի իրավաբանական մեկնաբանումը ներառված չէ ընտրական օրենսգրքում կամ վերջինս չի որոշակիացնում, թե որն է համարվում «վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող» անձը, հետևաբար, օրենքի այդ պահանջը լիարժեք հստակ և կանխատեսելի չէ պատգամավորական հավակնություն ունեցող յուրաքանչյուր անձի համար:

Արտահերթ զեկուլյցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկուլյցների հիման վրա:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ

Օրենսգրքով նախատեսվում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչություն իրականացնելու թեկնածուների հավասար հնարավորությունները, ինչը պարտավոր են պահպանել թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, ինչպես նաև ընտրությունների մյուս մասնակիցները: Արձանագրվել են թեկնածուների նախընտրական քարոզչության իրականացմանը խոչընդոտելու հետևյալ շուրջ մեկ տասնյակ դեպքերը:

Մի խումբ երիտասարդներ ծեծի են ենթարկել պատգամավորության թեկնածու Բաբկեն Գարոյանին և կոտրել նրա քիթը: Բռնության են ենթարկվել նաև պատգամավորության թեկնածուներ Գայանե Առուստամյանը և Ջոյա Թադևոսյանը: Գայանե Առուստամյանը վերոնշյալ խոչընդոտումների վերաբերյալ դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին և այդ խնդրի կապակցությամբ գրություն է գրվել ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված պատասխանի համաձայն՝ Գայանե Առուստամյանի հաղորդման հիման վրա 2012 թվականի ապրիլի 16-ին հարուցվել է քրեական գործ, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներով: Հետագայում 2012 թվականի մայիսի 21-ին Բ. Գարոյանը Մալաթիայի քննչական բաժնում դիմում է ներկայացրել այն մասին, որ ինքը պարտք և պահանջ չունի այդ հանցագործության մեջ իրեն մեղավոր ճանաչած Վարդան Վարդանյանի հետ, ներել է նրան և խնդրել օրենքի սահմաններում Վ. Վարդանյանին պատասխանատվության չենթարկել: Ելնելով վերոնշյալից՝ քրեական գործի վարույթը կարճվել է տուժող Բ. Գարոյանի և մեղադրյալ Վ. Վարդանյանի միջև հաշտության արդյունքում:

Մարդու իրավունքների պաշտպանի ստացած հաղորդման համաձայն՝ պատգամավորության թեկնածու Հովհաննես Մարգարյանի պաստառը փակցված է եղել Գյումրիում «GA» սննդի խանութի մուտքի մոտ: Այդ կապակցությամբ Գյումրիի քաղաքապետից ստացված պատասխանի համաձայն՝ ձեռնարկված միջոցների արդյունքում նշված խախտումը վերացվել է:

Ապրիլի 27-ին, ոստիկանության Էրեբունու բաժին է ահազանգել թիվ 13 ընտրատարածքի պատգամավորի ՀԱԿ թեկնածու Վիոլետա Պետրոսյանը և հայտնել, որ Մ. Խորենացու փողոցի թիվ 229 հասցեի մոտակայքում քարոզարշավի ժամանակ անհայտ անձինք խոչընդոտել են նախընտրական քարոզչություն իրականացնելուն: Ոստիկանության կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է նշված անձանց ինքնությունները, և վերցվել են բացատրություններ: Սույն խնդրի կապակցությամբ մեր գրությանն ի պատասխան Ոստիկանությունից հայտնել են, որ հետաքննության ընթացքում բացատրություններ են վերցվել նաև Վ. Պետրոսյանից, ով հայտնել է, որ նշված անձինք իրեն կամ իր համակիրներին չեն հարվածել,

հայիոյանքներ չեն տվել, միայն իրենց լկտի պահվածքով խոչընդոտել են քարոզարշավին: Այսպիսով, գործի նյութերի նախապատրաստմամբ հիմնավորվել է, որ Վ. Պետրոսյանի կամ նրան ուղեկցող անձանց նկատմամբ բռնություն կամ սպառնալիք չի գործադրվել, ինչպես նաև վերջիններից ոչ ոքի չի արգելվել շարունակել քարոզչությունը: Քրեական գործի հարուցումը մերժվել է հանցադեպի բացակայության պատճառով:

Պաշտպանին ուղղված մեկ այլ ահազանգի համաձայն՝ 2012թ. ապրիլի 26-ին նախատեսված է եղել թիվ 2 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Վլադիմիր Կարապետյանի հանդիպումը քաղաքացիների հետ: Նախատեսված ժամին թեկնածուն սկսել է իր նախընտրական քարոզարշավը, ինչից մի քանի րոպե անց բախում հայտնվել են «թաղային հեղինակություններ», ովքեր խոչընդոտել են թեկնածուի հանդիպմանը ընտրողների հետ: Կատարվածից հետո Վ. Կարապետյանը հեռացել է և բազմաթիվ քաղաքացիներ չեն կարողացել ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները: Ըստ ահազանգողի նշված «թաղային հեղինակությունները», սպառնալով չտալ նախապես խոստացված 5 հազարական դրամները, վախի մթնոլորտում են պահում տեղի բնակչությանը: Նշված դեպքի կապակցությամբ Պաշտպանին ուղղված ոստիկանության գրության պատասխանի համաձայն՝ ոստիկանության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում չի հիմնավորվել թեկնածուի կամ նրա վստահված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հանգամանքը, և կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Ընդ որում, նյութերի նախապատրաստման ընթացքում Վ. Կարապետյանը հրաժարվել է ներկայանալ ոստիկանության բաժին:

Թիվ 32 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու առաջադրված Անուշավան Նիկողոսյանը 2012 թվականի ապրիլի 10-ին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով հայտնել է, որ Տաշիր քաղաքում իր քարոզչական պաստառը տեղադրելիս Տաշիրի քաղաքապետը սպառնալիքների գործադրմամբ հրամայել է անհապաղ դադարեցնել պաստառի տեղադրումը: Վերոնշյալի կապակցությամբ Պաշտպանի կողմից տարբեր իրավասու պետական մարմիններին կատարված հարցումների արդյունքում դիմումատուի նշած տվյալները չեն հիմնավորվել:

Թիվ 30 ընտրատարածքում առաջադրված պատգամավորության թեկնածուներից մեկի՝ Վանաձոր քաղաքում տեղադրված պաստառը անհայտ անձինք պոկել են: Դեպքի կապակցությամբ վարչական գործ հարուցելու նպատակով Ոստիկանությունում կատարված նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել պարզել իրավախախտումը կատարած անձին: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումի համաձայն թիվ 37 ընտրատարածքի որոշ համայնքների ընտրական տեղամասերը, Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական շտաբերը գտնվել են տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում: Սույն խնդրի կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԸՀ) ուղղված գրության պատասխանի համաձայն՝ հաղորդմամբ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանել իրականությանը:

Զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկատվության համաձայն թիվ 29 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ինքնաառաջադրված պատգամավորության թեկնածու Վահագն Մարտիրոսյանի վստահված անձի՝ Գևորգ Մելքոնյանի նկատմամբ Լեռնապատ համայնքի ղեկավարի մերձավորների կողմից բռնություն է գործադրվել: Ոստիկանության կողմից նախապատրաստվող նյութերով և ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, հետևապես կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Նախընտրական քարոզչության իրականացմանը խոչընդոտելու կապակցությամբ Ոստիկանությունն ստացված բոլոր հաղորդումների վերաբերյալ Ոստիկանությունից հայտնել են, որ այդ դեպքերի կապակցությամբ ձեռնարկվել են օպերատիվ-միջոցառումներ, ինչի արդյունքում այդ դեպքերի հետ ենթադրաբար առնչություն ունեցող անձանցից վերցվել են բացատրություններ, որոնցով սակայն հնարավոր չի եղել պարզել հանցադեպի առկայությունը և/կամ իրավախախտումը կատարած անձանց ինքնությունը, հետևապես բոլոր այդ դեպքերով կայացվել են քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումներ:

Բացի նախընտրական քարոզչության իրականացմանը խոչընդոտելուն վերաբերող վերոհիշյալ դեպքերից, Պաշտպանը ստացել է նաև մի քանի այլ ահազանգեր, որոնց համաձայն մայիսի 5-ին Երևան քաղաքի տարբեր փողոցներում շարունակել են փակցված մնալ Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական պաստառները, պատգամավորության թեկնածուներ Ա. Սարգսյանի, Ս. Սուքիասյանի, Գ. Ծառուկյանի, Թ. Հովհաննիսյանի, Ռ. Սաղոյանի, Ա. Բաղդասարյանի նախընտրական պաստառները, Թումանյան-Աբովյան խաչմերուկում ցուցադրվել է Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական տեսահոլովակը, իսկ մայիսի 6-ին թիվ 3/11, 3/18 և 3/29 ընտրական տեղամասերի հարևանությամբ գտնվող շենքերի վրա փակցված է եղել մեծամասնական ընտրակարգով ԱԺ պատգամավորության թեկնածու Ա. Ստեփանյանի նախընտրական պաստառը: Պաշտպանին ուղղված ԿԸՀ գրության համաձայն՝ ընտրական օրենսգիրքը չի սահմանում որևէ դրույթ, ըստ որի քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչական պաստառները և քարոզչական տպագիր նյութերը պետք է վերացվեն: Ստացված մեկ այլ ահազանգի համաձայն՝ 34/04 ընտրական տեղամասում մայիսի 6-ին փակցված է եղել ՀՀԿ ցուցակով առաջադրված Սերժ Սարգսյանի լուսանկարը: Սույն խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հրահանգ է տվել տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ քվեարկության օրը Հանրապետության Նախագահի լուսանկարը մեկ այլ սենյակ տեղափոխելու մասին:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները

Նախընտրական քարոզչությունը հիմնականում անցել է ազատ և առանց էական խոչընդոտների, ինչը դրական նախադրյալներ է ստեղծել բոլոր թեկնածուների հավասար մրցակցության համար: Այդուհանդերձ, արձանագրված նույնիսկ սակավաթիվ միջադեպերը բավարար արդյունավետ չեն քննվել

Արտահերթ զեկուլյցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկուլյցների հիման վրա:

նստիկանության և դատախազության կողմից, ինչի մասին վկայում է այն փաստը, որ նստիկանություն ստացված բոլոր հաղորդումների վերաբերյալ ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել պարզել հանցադեպի առկայությունը և/կամ իրավախախտումը կատարած անձանց ինքնությունը, հետևապես բոլոր այդ դեպքերով կայացվել են քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումներ: Նման արդյունքները էականորեն նվազեցնում են հանրության վստահությունը այդ մարմինների և ընտրական գործընթացների նկատմամբ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանը ընտրությունների անհավասար լուսաբանման վերաբերյալ որևէ ահազանգ չի ստացել:

Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ ՀՌԱՀ) 2012թ.-ի մայիսի 6-ին հայտնել է, որ ընդհանուր առմամբ բավարարված է հեռուստատեսությամբ և ռադիոյով տարվող նախընտրական քարոզարշավի ընթացքից և կուսակցություններին տրամադրվող եթերաժամանակի պայմաններից: Սակայն համաձայն վերոգրյալ հայտարարության՝ ՀՌԱՀ-ի կողմից կատարված մշտադիտարկման արդյունքում գրանցվել է երկու դեպք, երբ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները դժգոհել են իրենց մասին մամուլում զետեղված լուսաբանումից: ՀՌԱՀ-ի համաձայն՝ երկու դեպքերում էլ հանձնաժողովը առանց թեկնածուների կողմից դիմումներ ներկայացնելու արձագանքել է և նրանց իրավունքները վերականգնվել են:

Երևանի մամուլի ակումբի 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում հետազոտված հեռարձակվող զանգվածային լրատվության միջոցներն ընդհանուր առմամբ քաղաքական ուժերի համար ապահովել են հավասար պայմաններ իրենց ծրագրերն ու հայացքները ընտրազանգվածին ներկայացնելու համար: Հաշվետվության համաձայն՝ ընտրությունների ոչ բոլոր մասնակիցների մասին են ընտրողները համարժեք տեղեկություններ ստացել, սակայն դա եղել է քաղաքական ուժերի ընտրարշավ կազմակերպելու հնարավորությունների և ցանկության հետևանքը: Նշվել է նաև, որ այս առումով հայաստանյան հեռարձակողներն անվիճելի առաջընթաց են ցուցաբերել նախորդ համապետական ընտրությունների համեմատ:

Ամփոփելով նախընտրական մշտադիտարկման արդյունքները՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեից (ԽԱՊԿ) հայտնել են, որ լրատվամիջոցների կողմից պահպանվել է լուսաբանման հավասարակշռությունը:

Միջազգային կազմակերպությունները նույնպես անդրադարձել են 2012 թվականի Ազգային ժողովի ընտրությունների լուսաբանման հարցին: Մասնավորապես, նշվել է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից մշտադիտարկված լրատվամիջոցներն իրականացրել են վեց խոշոր կուսակցությունների և դաշինքի լայնածավալ լուսաբանում՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս իրենց ձայնն հասանելի դարձնել ընտրողներին, սակայն մեծամասնական թեկնածուների լուսաբանումը սահմանափակ է եղել:

Ընտրությունների լուսաբանման վերաբերյալ քաղաքական ուժերը բացասական կարծիք չեն հայտնել: Դրական կարծիքներ են հայտնել «Ժառանգություն» և «Օրինաց երկիր» կուսակցությունները՝ նշելով, որ ընտրարշավին մասնակցող քաղաքական ուժերի քարոզարշավը լուսաբանվել է համակողմանի և ապահովվել է հեռուստատեղի օգտագործման համեմատաբար հավասար պայմաններ:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները.

Բոլոր շահագրգիռ անձանց և դիտորդ կազմակերպությունների կողմից այս ընտրություններում ամենադրականը գնահատվել է ընտրությունների լուսաբանումը, որի հետ կապված բացառիկ առաջընթաց է գրանցվել համեմատած նախորդ բոլոր ընտրությունների հետ: Զանգվածային լրատվության միջոցները բոլոր թեկնածուներին և քաղաքական ուժերին հնարավորություն ընձեռեցին իրենց տեսակետները, գաղափարներն ու ծրագրերը ներկայացնել հանրությանը:

Ցավոք, գաղափարական և ծրագրային լուրջ քննարկումներ ծավալելու համար մրցակից ուժերը չկարողացան օգտագործել ընձեռված այս լայն հնարավորությունը: Հանրության զգալի մասը այդպես էլ չստացավ իրեն հուզող բազմաթիվ արտաքին և ներքին քաղաքական հիմնահարցերի այլընտրանքային լուծումները, ինչն էլ նպաստեց հաճախ ապաքաղաքական և ապագաղափարական ընտրությանը, որն էլ իր հերթին պարարտ հիմք է ընտրազանգվածին ընտրակաշառքով կողմնորոշելու համար:

Հաջորդ ընտրություններին, նման ազատ և հավասար լուսաբանման միտումները պահպանվելու պարագայում, զանգվածային լրատվության միջոցները պետք է ստիպեն թեկնածուներին և քաղաքական ուժերին չսահմանափակվել վերամբարձ, ընդհանրական, հաճախ մերկապարանոց, երբեմն ծայրահեղական հոչակազրերով և լռունգներով: Լրագրողները կարող են և պետք է մրցակից ուժերից ստանան ու հանրությանը մատուցեն տարբեր խնդիրների շուրջ բովանդակային, իրատեսական ու կոնկրետ ծրագրային լուծումներ և առաջարկներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանը քվեարկության օրը ստացել է 204 ահազանգ, որոնց ուսումնասիրությունը և վերլուծությունը ներկայացվում է ստորև, բայց ոչ սպառիչ: Պաշտպանին ուղղված ահազանգերից 5-ը վերաբերել են քվեարկության գաղտնիության ապահովման պահանջի խախտմանը, մասնավորապես՝ քվեարկության խցիկների և քվեատուփերի՝ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտմամբ տեղադրված լինելուն: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խումբը թիվ 11/14 ընտրատեղամասում արձանագրել և լուսանկարել է օրենսգրքով նախատեսված մեկ մետր հեռավորության խախտմամբ իրար մոտ տեղադրված քվեախցիկներ: Նշվածի կապակցությամբ գրություն է ուղարկվել ԿԸՀ, որին կցվել է նաև վերոնշյալ խախտումը հավաստող լուսանկարը: Այդ գրությանը ստացված պատասխանի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանների ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ նշված ընտրատեղամասերում ներկա են գտնվել ընդհանուր թվով 55 վստահված անձինք, և, հաշվի առնելով, որ այդ ընտրատեղամասերի գրանցամատյաններում չկան համապատասխան գրառումներ տեղամասերի կահավորման հետ կապված բողոքների վերաբերյալ՝ հետևապես տեղամասում Օրենսգրքով սահմանված քվեարկության կարգի խախտում տեղի չի ունեցել:

Ստացվել են 4 ահազանգեր ընտրատեղամասերում բաց քվեարկություն իրականացնելու վերաբերյալ, երբ քվեաթերթիկը քվեատուփի զցելուց առաջ ընտրական հանձնաժողովի անդամները ընտրողներից պահանջել են ցույց տալ քվեաթերթիկի պարունակությունը: Նշվածի կապակցությամբ գրություն է ուղարկվել ԿԸՀ, որի կապակցությամբ վերջինս հայտնել է, որ պարզաբանում է պահանջվել այդ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահից, ումից ստացված բանավոր հաղորդմամբ պարզվել է, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Հայտնել են նաև, որ նշված տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում որևէ գրառում չկա քվեարկության սահմանաված կարգի խախտման մասին:

Ստացվել են 14 ահազանգեր, որոնք վերաբերել են քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին այլ անձի կողմից օգնություն տրամադրելու կարգի խախտմանը, մասնավորապես՝ քաղաքացի Ա.Ա.-ն մտահոգություն էր հայտնել, որ ընտրական տեղամասում քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող մի շարք ընտրողներին օգնել է նույն անձը, որի կապակցությամբ ընտրական հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրություն կազմել: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ ընտրական տեղամասում քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողներին օգնել է ընտրական հանձնաժողովի

նախագահի կողմից որոշված անձր: Այս ահազանգերի կապակցությամբ ԿԸՀ-ին ուղղված գրությանն ի պատասխան հայնտել են, որ իրենց կողմից ուսումնասիրվել են այդ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները և Օրենսգրքով սահմանված կարգի խախտումներ չեն հայտնաբերվել:

Այս և այլ ահազանգերի վերաբերյալ ԿԸՀ-ից ստացված պատասխաններից կարելի է եզրակացնել, որ խախտումների մասին գրանցամատյաններում համապատասխան գրառում չլինելու դեպքերում ԿԸՀ-ն տվյալ ընտրախախտումը դիտարկում է չկատարված և հիմք ընդունելով այդ հիմնավորումը՝ որևէ միջոց չի ձեռնարկում նման խախտումները հետազայում բացառելու համար, այնինչ եղել են բազմաթիվ ահազանգեր, որոնցով քաղաքացիները մտահոգություն են հայտնել, որ որոշ ընտրատարածքներում հանձնաժողովի նախագահը չի արձանագրել խախտումները գրանցամատյաններում, ինչպես նաև որոշ ընտրատարածքներում հանձնաժողովին չի տրամադրվել գրանցամատյան:

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է վերադաս հանձնաժողովի կողմից կնքած գրանցամատյանների տրամադրում ընտրական հանձնաժողովներին, որոնցում գրառվում են քվեարկության օրն արձանագրված խախտումները, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի գործողությունները քվեարկությունից առաջ, քվեարկության կազմակերպման և անցկացման ընթացքում, քվեարկության արդյունքներն ամփոփելու հետ կապված գործողությունները, ինչպես նաև վերահաշվարկի վերաբերյալ դիմումները: Հանձնաժողովի անդամները, վստահված անձանց քվեարկության կարգի խախտման առկայության դեպքում, իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականը արձանագրվի գրանցամատյանում: Պաշտպանը ստացել է ահազանգ, որը վերաբերել է 24 ընտրատարածքի մի շարք ընտրատեղամասերում ընտրախախտումները գրանցելու համար գրանցամատյաններ չտրամադրելուն, սակայն ԿԸՀ-ից հայտնել են, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Մեկ այլ հաղորդման համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում հանձնաժողովի կազմում ներգրավված է եղել ավագանու անդամ: Սույն խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ից ստացվել է պատասխան, որի համաձայն՝ այդ ընտրատարածքի ընտրական հանձնաժողովի պարզաբանմամբ՝ հանձնաժողովի նշված անդամները հանդիսացել են ավագանու նախկին անդամներ և նրանց լիազորությունները դադարեցվել են մինչև Օրենսգրքով տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման համար սահմանված ժամկետը:

Քաղաքացի Ա.Ա.-ն մտահոգություն է հայտնել, որ 21/01 և 2/08 ընտրատեղամասում միննույն խցիկում ընտրություն են կատարել միաժամանակ մեկից ավելի անձինք: Նշվածի կապակցությամբ ԿԸՀ-ն պարզաբանել է, որ 21/01 և 2/08 ընտրատեղամասերի գրանցամատյաններում տեղ են գտել գրառումներ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողի կողմից հանձնաժողովի նախագահին

տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ այլ անձի հրավիրելու վերաբերյալ, ինչն ըստ Օրենսգրքի իրավաչափ է:

Ստացվել է նաև ահազանգ, որ թիվ 28/28 ընտրական տեղամասում ընտրողը, համապատասխան նշումը կատարած, քվեարկության թերթիկը ձեռքին, մոտեցել է հանձնաժողովի անդամին, ով կնիք է դրել միայն անձնագրում, որից հետո ընտրողը հեռացել է դեպի ընտրախցիկը: Ընտրական հանձնաժողովը այդ միջադեպին անմիջապես արձագանքել է: Ընտրողին նույն պահին բացատրվել է քվեարկության կարգը, և խախտումը վերացվել է: Սակայն ԿԸՀ-ն միջոցներ չի ձեռնարկել ընտրախախտումը կատարած անձին համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար:

Ընտրական օրենսգրքը հստակորեն սահմանում է քվեարկության սենյակում միաժամանակ 15-ից ավելի քվեարկողներ գտնվելու, քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելու, ինչպես նաև տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումների արգելքը: Ստացվել են 18 ահազանգեր, որոնք վերաբերել են քվեարկության սենյակում միաժամանակ 15 հոգուց ավելի անձանց գտնվելուն: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման աշխատակիցները թիվ 34/22 հանձնաժողովի նախագահի ահազանգի հիման վրա այցելել են այդ ընտրատեղամաս: Այցելության ընթացքում պարզ է դարձել, որ քվեարկության սենյակի քվեարկողների թիվը գերազանցել է 15-ը: Պաշտպանի գրասենյակի աշխատակիցների միջամտությամբ ոստիկանության ծառայողների կողմից կիրառվել են համապատասխան միջոցառումներ քվեարկության սենյակում քվեարկողների թիվը 15-ը չգերազանցելու համար:

Քաղաքացի Ա.Ա.-ի կողմից ստացված ահազանգի համաձայն՝ 39/32 և 09/05 ընտրական տեղամասերում ընտրողների թիվը գերազանցել է 15-ը, ինչպես նաև ընտրական տեղամասին հարող տարածքում 50 մետր շառավղով եղել են մարդկանց խմբեր: Այս ահազանգերի կապակցությամբ գրություն է ուղարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, սակայն իր պատասխանում ԿԸՀ-ն անդրադարձ չի կատարել նշված խնդրին:

Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում: Ստացված 64 ահազանգերը վերաբերել են ընտրատեղամասերում ընտրողների անձնագրերում դրված դրոշմակնիքների՝ օրենքով սահմանված ժամկետից շուտ անհետացմանը: Ստացվել են նաև 7 ահազանգեր՝ որոնց համաձայն քվեարկության ընթացքում որոշ ընտրողների անձնագրերում դրոշմակնիք ընդհանրապես չի դրվել: Քաղաքացիները մտահոգություն են հայտնել, որ կնիքի շուտ անհետանալու պատճառով նույն անձը կարող էր քվեարկել մեկից ավելի անգամներ: Վերոնշյալի կապակցությամբ ԿԸՀ նախագահի կողմից զանգվածային լրատվության միջոցներով կատարված հայտարարության համաձայն՝ սույն խնդիրը ծագել է դրոշմակնիքներն առանց նախապես թափահարման օգտագործելու հետևանքով: Վերջինս միևնույն ժամանակ

նշել է նաև, որ խնդրի վերացման ուղղությամբ արդեն ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Չնայած սույն խնդրի վերաբերյալ ԿԸՀ նախագահի կողմից կատարված հայտարարությանը, այնուամենայնիվ ԿԸՀ-ի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել կնիքը ոչ պատշաճ ձևով օգտագործած անձանց համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտրողի անձնագրում դրված դրոշմակնիքը մնացել է քաղաքացու անձնագրում Օրենսգրքով սահմանված 12 ժամից ավել: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված նման դիմումի կապակցությամբ ԿԸՀ ուղարկված գրությանն ի պատասխան հայտնել են, որ վերոնշյալ իրավանորմի բովանդակությամբ դրոշմակնքման համար օգտագործվող թանաքը պետք է պահպանվեր առնվազն 12 ժամ, և առնվազն 12 ժամ դրոշմի առկայությունն է Ընտրական օրենսգրքով ամրագրված դրույթի հիմնական իմաստը, կիրառման բովանդակությունն ու նպատակը: Նշված իրավանորմով դրոշմակնքման համար օգտագործվող թանաքի անհետանալու պայմանի վերաբերյալ ժամկետային սահմանափակում չի սահմանվում, ուստի նրա մինչև այժմ պահպանվելը չի կարող հակասել Ընտրական օրենսգրքի նշված նորմին: Նույն խնդրի վերաբերյալ դեռևս 2011 թվականի հոկտեմբերի 17-ի Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ եզրակացության մեջ նշվել է, որ դրոշմակնիքի թանաքը պետք է անհետանա մոտավորապես 12 ժամից հետո, ինչը կարող է լուծել անձը հաստատող փաստաթղթերում կնիքի առկայության պատճառով քաղաքացիների հնարավոր ահաբեկման (հետապնդման, ճնշումների) խնդիրները:

Օրենսգիրքն ամրագրում է, որ քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը քվեարկության ծրարը կնքում և քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն ընտրողի անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելուց հետո: Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթղթում առկա է տվյալ ընտրությանը մասնակցելու մասին դրոշմակնիք, ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով տեղեկացնում է հերթապահող ոստիկաններին հանցագործության փորձի մասին: Ստացվել են շուրջ 6 ահազանգեր, որոնք վերաբերել են մեկ անձի կողմից մեկից ավելի անգամ քվեարկելուն: Նշված դեպքերի կապակցությամբ Ոստիկանությունից հայտնել են, որ ձեռնարկվել են օպերատիվ-միջոցառումներ, ինչի արդյունքում այդ դեպքերին ենթադրաբար առնչություն ունեցող անձանցից վերցվել են բացատրություններ, որոնցով սակայն հնարավոր չի եղել պարզել հանցադեպի առկայությունը և/կամ իրավախախտումը կատարած անձանց ինքնությունը, հետևապես կայացվել են քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումներ:

Ստացվել է 14 ահազանգ ինքնուրույն քվեարկությանը ներկայանալու հնարավորություն չունեցող, սակայն բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ

չգտնվող անձանցից, ովքեր գրկվել են քվեարկությանը մասնակցելու հնարավորությունից, քանի որ ընտրական օրենսգիրքը չի նախատեսում քվեարկություն շրջիկ արկղի միջոցով:

Քաղաքացին՝ այցելելով թիվ 27/13 ընտրատեղամաս, հանձնաժողովի անդամներից տեղեկացել է, որ իր հասցեից արդեն իսկ քվեարկել են իրեն անհայտ 3 քաղաքացիներ: Այդ դեպքը արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խմբի և լրատվական կայքերից մեկի թղթակցի կողմից: Արագ արձագանքման աշխատակիցները քաղաքացուն ուղղորդել են դիմել Ոստիկանություն: Մեկ այլ քաղաքացի նույնպես հայտնել է, որ այցելելով թիվ 3/1 ընտրատարածք՝ հանձնաժողովի անդամներից տեղեկացել է, որ իր փոխարեն արդեն իսկ քվեարկել են: Նշված խնդիրների կապակցությամբ գրություն է ուղարկվել Ոստիկանություն, ինչի վերաբերյալ Ոստիկանությունից հայտնել են, որ այդ խնդիրների վերաբերյալ նախապատրաստած նյութերով քրեական գործերի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Ստացվել են 9 ահազանգեր, որոնք վերաբերել են կողմնակի անձանց կողմից ընտրատեղամասերում ընտրական գործընթացի խախտմանը: Մասնավորապես՝ Ա.Ս.-ն հայտնել է, որ Վարդենիկ համայնքի ղեկավարը և մի քանի այլ անձինք քվեաթերթիկները հաշվելու ընթացքում անարգել մուտք են գործել թիվ 24/31 և 24/32 ընտրատեղամասեր և խոչընդոտել հանձնաժողովի աշխատանքները: Այս ահազանգերի կապակցությամբ գրություններ են ուղարկվել ԿԸՀ և Ոստիկանություն: ԿԸՀ-ից և Ոստիկանությունից ստացված պատասխանների համաձայն՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու արդյունքում պարզվել է, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանել իրականությանը:

Ստացվել է ահազանգ, համաձայն որի՝ թիվ 05/08 ընտրական տեղամասի քվեարկության խցիկում հայտնաբերվել է մեծամասնական ընտրակարգի քվեաթերթիկի դատարկ ծրար, որի վերաբերյալ ընտրական հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել: Սույն խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ի հայտնած դիրքորոշման համաձայն՝ Օրենսգիրքը նախատեսում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են և պետք է բողոքարկվեն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Ոստիկանությանից պարզ է դառնում, որ նշված խնդիրը չի դիտարկվել ԿԸՀ կողմից որպես ընտրախախտում:

Պաշտպանը գրությամբ դիմել է ԿԸՀ քվեարկության օրը ԿԸՀ-ի կողմից արձանագրված ընտրախախտումների և վերջիններիս կապակցությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու համար, գրությանն պատասխան ստացվել է, որ ԿԸՀ-ն Ընտրական օրենսգրքի խախտումների դեպքերի թվային վիճակագրություն չի վարում:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները

Արձանագրված և վերը նշված խախտումների քանակը վկայում է, որ 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում վերացել կամ էականորեն նվազել են նախկինում լայնորեն կիրառված այնպիսի ընտրախախտումներ, ինչպիսիք էին բաց քվեարկությունը, քվեաթերթիկների լցումը, այլ անձանց փոխարեն քվեարկությունը, քվեաթերթիկների դուրս բերումը տեղամասից և հաջորդ ընտրողին հանձնելը և այլն: Նույնիսկ եթե վերը թվարկված բոլոր ահազանգերը լինեին ապացուցված և ճշմարիտ, այդ դեպքում ևս արձանագրված խախտումների քանակը չէր կարող էական ազդեցություն ունենալ քվեարկության կազմակերպման ընդհանուր դրական գնահատականի վրա: Քվեարկությունն ընդհանուր առմամբ անց է կացվել օրենքի պահանջներին համապատասխան, լավ կազմակերպված և առանց բռնությունների:

Միևնույն ժամանակ արձանագրված խախտումները և ստացված ահազանգերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից բավարար խորությամբ չեն քննվել, իսկ ԿԸՀ մտեցումը իրեն հասցեագրված միջադեպերի և խնդիրների նկատմամբ շատ դեպքերում կարելի է բնորոշել որպես իրավաբանական ֆորմալիզմ: Նման գործելաձևը չի նպաստում հանրության վստահության բարձրացմանը ընտրական գործընթացների նկատմամբ և սովերում է պետության, այդ թվում՝ ԿԸՀ-ի գրանցած դրական առաջխաղացումը:

ԷԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆՍՈՒՄՆԵՐ

Ընտրակաշառքի դեպքեր

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն հարկադրելը, որը կատարվել է անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալու միջոցով, ինչպես նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը նախատեսում է վարչական պատասխանատվություն նախընտրական քարոզչության իրականացման համար թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից անձամբ կամ նրանց անունից բարեգործության անվան տակ կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով նյութական օժանդակություն տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը):

Նախընտրական քարոզչության և ընտրության օրվա ընթացքում Պաշտպանի ստացած 16 ահազանգերը վերաբերել են Հանրապետության տարբեր վայրերից նախընտրական քարոզչություն իրականացնող որոշ կուսակցությունների կողմից բնակչությանը տարբեր տեսակի ընտրակաշառք բաժանելու դեպքերին՝ ներառյալ գումարի և բնամթերքի բաժանում, կոմունալ վարձերի վճարման առաջարկություն և այլն:

Նախընտրական փուլում ընտրակաշառք բաժանելու մասին Ոստիկանությունում գրանցվել է 28 դեպք, որոնց վերաբերյալ, չնայած Ոստիկանության կողմից ձեռնարկված գործողություններին, այնուամենայնիվ կայացվել է որոշում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Այդ դեպքերից 10-ը վերաբերել են Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, 4-ը՝ Օրինաց Երկիր կուսակցությանը, 3-ը՝ Բարգավաճ Հայաստան կուսակցության կողմից ընտրակաշառքներ բաժանելուն, իսկ մնացած դեպքերը կապված են եղել մեծամասնական ընտրակարգով առաջարկված պատգամավորության թեկնածուների կողմից ընտրակաշառքներ բաժանելուն:

Քվեարկության օրը ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ Ոստիկանություն ստացված 74 ահազանգերից 67 դեպքերով Ոստիկանությունից հայտնել են, որ ձեռնարկվել են

օպերատիվ-միջոցառումներ, ինչի արդյունքում այդ դեպքերին ենթադրաբար առնչություն ունեցող անձանցից վերցվել են բացատրություններ, որոնցով սակայն հնարավոր չի եղել պարզել հանցադեպի առկայությունը և/կամ իրավախախտումը կատարած անձանց ինքնությունը, հետևապես կայացվել են քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումներ և այդ դեպքերի վերաբերյալ ստացված պատասխանների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Դատախազությունը այդ որոշումներից որևէ մեկը չի վերացրել: Ընտրակաշառքներ բաժանելու դեպքերի վերաբերյալ գրություն է գրվել նաև ՀՀ գլխավոր դատախազություն տեղեկություններ ստանալու համար, սակայն պատասխան գրությունը ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունից: Ստացված պատասխանի համաձայն՝ մայիսի 6-ին ընտրախախտումների վերաբերյալ բազմաթիվ ահազանգներից և հաղորդումներից հարուցվել է ընտրակաշառք բաժանելու 8 գործեր, որոնցից 7-ը վերաբերում են ԲՀԿ խմբակցության անդամ Մարտուն Գրիգորյանի և Մալաթիա համայնքում ԲՀԿ-ի օգտին քվեարկելու համար ընտրակաշառք բաժանելու դեպքերին: Նշված բոլոր գործերը շուրջ մեկ ամսից ավել է ինչ գտնվում են նախաքննության փուլում և ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ստացված պատասխանի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ չնայած անցած ժամանակահատվածին, այդ գործերով մեղադրանքներ չեն առաջադրվել տվյալ անձանց:

Ստացվել են շուրջ 24 ահազանգեր քաղաքացիներին տեղամասային կենտրոններ անվճար տեղափոխելու և ընտրողին թեկնածուներից մեկի օգտին քվեարկել հարկադրելու վերաբերյալ: Այսպես, Ա.Ա.-ն հայտնել է, որ քաղաքացիներին տեղափոխել են ընտրատարածքներ և ուղղորդել են ընտրել Հայաստանի Հանրապետական կուսակցության օգտին: Նշված խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ն պարզաբանել է, որ Օրենսգիրքը չի կանոնակարգում ընտրական տեղամաս գնալու եղանակներն ու միջոցները, իսկ քանի որ Հայաստանի Հանրապետական կուսակցության օգտին քվեարկել հարկադրելու վերաբերյալ ԿԸՀ-ն որևէ բողոք չի ստացել, միաժամանակ խորհուրդ են տվել հարկադրման փաստը հաստատող հիմնավոր ապացույցների առկայության դեպքում դիմել իրավասու մարմիններին:

Զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկատվության համաձայն ԲՀԿ-ի քարոզարարչավի ժամանակ, Տավուշի մարզի Կողբ գյուղում անվճար տրակտորներ են բաժանվել: Այս խնդրի կապակցությամբ գրություն է գրվել Ոստիկանություն, որին ի պատասխան հայտնել են, որ վերը նշված տեխնիկայից բնակիչներին, ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով ոչ մի միավոր չի բաժանվել:

Մեկ այլ քաղաքացու հաղորդմամբ՝ քաղաքացիներին ստիպողաբար նստեցրել են երթուղային տաքսի և տարել թիվ 6 ընտրատարածք՝ ՀՀԿ-ի օգտին քվեարկելու համար: Նշված խնդիրների կապակցությամբ Ոստիկանությանն ուղղված գրության պատասխանի համաձայն՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ կայացվել է որոշում քրեական գործերի հարուցումը մերժելու վերաբերյալ:

Ահագանգ է ստացվել քաղաքացի Բ.Գ.-ից քաղաք Երևանում ՀՀԿ-ի օգտին ընտրելու համար ընտրակաշառք բաժանելու դեպքի վերաբերյալ: Խնդրի կապակցությամբ ՀՀ Ոստիկանությանն ուղղված գրությանը պատասխան է ստացվել առ այն, որ 2012 թվականի մայիսի 25-ին կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ: Սակայն հետագայում Պաշտպանի աշխատակազմը սեփական նախաձեռնությամբ քաղաքացի Ա.Ա.-ից պարզել է, որ վերջինիս հանդեպ Ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառվել է հոգեբանական ճնշում, որի արդյունքում էլ նա չի ցանկացել համագործակցել Ոստիկանության աշխատակիցների հետ, ավելին, հրաժարվել է իր կողմից հայտնած տեղեկություններից: Քաղաքացին Պաշտպանի աշխատակազմին գրավոր ձևով կրկին անգամ հաստատել է վերոգրյալ ընտրակաշառքի բաժանման դեպքը՝ միաժամանակ խնդրելով պահպանել իր անձին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

Մեկ այլ քաղաքացու հաղորդմամբ «Օրինաց երկիր» կուսակցության կողմից խոստացվել է ընտրակաշառք իր անձնագրային տվյալները վերցնելու դիմաց: Այս խնդրի վերաբերյալ Ոստիկանությանն ուղարկված գրությանը պատասխան է ստացվել, որ 2012 թվականի մայիսի 19-ին կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ: Սակայն հետագայում Պաշտպանի աշխատակազմը կրկին սեփական նախաձեռնությամբ կապ է հաստատել քաղաքացու հետ և պարզել, որ Ոստիկանության աշխատակիցների կողմից ճնշում է գործադրվել քաղաքացու նկատմամբ, որի հետևանքով վերջինս հրաժարվել է իր կողմից հայտնած տեղեկություններից:

Ստացված տեղեկություններից մեկի համաձայն Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ՀՀԿ նախընտրական շտաբի աշխատակիցները հավաքագրել են քաղաքացիների անձնագրերի տվյալները՝ յուրաքանչյուր քվեի դիմաց խոստանալով 8.000 ՀՀ դրամ: Նշված դեպքի կապակցությամբ գրություն է ուղարկվել Ոստիկանություն: Պատասխան գրությամբ վերջինս հայտնել է, որ կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Ստացվել է նաև ահագանգ, որ Դվին գյուղական համայնքի ղեկավար ՀՀԿ անդամ Արծրուն Աբրահամյանը գյուղապետարանի իր աշխատասենյակում 10.000 դրամ ընտրակաշառք է բաժանել նույն գյուղի ընտրողներին: Ոստիկանությունից այս ահագանգի վերաբերյալ հայտնել են, որ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնում նախապատրաստվել են նյութեր, վերցվել են բացատրություններ, որոնցով սակայն չի հիմնավորվել Արծրուն Աբրահամյանի կողմից ընտրակաշառք բաժանելու հանգամանքը և կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Ըստ ահագանգի Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի Անի թաղամասի հարևանությամբ գտնվող համայնքապետարանի աշխատակիցների կողմից քաղաքացիներին ընտրակաշառք է բաժանվել: Խնդրի կապակցությամբ ՀՀ Ոստիկանությունից հայտնել են, որ վերցվել են բացատրություններ շահագրգիռ կողմերից, որոնք հերքել են նման

Արտահերթ զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի արժանահավատ և չհերքված հրատարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների հիման վրա:

երևույթի առկայությունը, ինչի արդյունքում կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

ՀԱԿ-ի նախընտրական շտաբի ներկայացուցիչ Հուսիկ Մելքոնյանի հայտարարության համաձայն՝ ՀՀԿ-ի ներկայացուցիչները «Լիթեյնու» հանրակացարանում 15.000 դրամ ընտրակաշառք են բաժանել: ՀՀ ոստիկանությունում նշված գործով նախապատրաստված նյութերով չի հիմնավորվել որևէ կուսակցության կամ պատգամավորության թեկնածուի կողմից ընտրակաշառք բաժանելու հանգամանքը, հետևապես կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Թիվ 7/25 ընտրատեղամաս Ա.Ա.-ն ահազանգել էր այն մասին, որ թեկնածուներից մեկի վստահված անձը ուղղորդել է քաղաքացիներին այդ թեկնածուի օգտին ընտրելու հարցում: Նշվածի կապակցությամբ ահազանգողը դիմել է նաև ոստիկանության միջամտությանը: Ոստիկանությունից ստացված պատասխանի համաձայն՝ դեպքի հանգամանքների վերաբերյալ կատարվել են ստուգումներ, որոնցով հիմնավորվել է, որ նշված իրավիճակում որևէ խախտում տեղի չի ունեցել:

Քվեարկության օրը քաղաքացի Բ.Բ.-ի՝ Պաշտպանին հասցեագրված ահազանգի համաձայն ներքին Գետաշեն համայնքի ղեկավար Կարո Գևորգյանը թիվ 24/15 ընտրատեղամասի մուտքի առջև ընտրողներին գումար է բաժանել: Ոստիկանությունից ահազանգի կապակցությամբ հայտնել են, որ ստացված հաղորդագրության հիման վրա կատարված գործողությունների արդյունքում համայնքի ղեկավարի կողմից գումար բաժանելու փաստը չի հիմնավորվել, և մայիսի 18-ին կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Մեկ այլ քաղաքացի ահազանգել է, որ Լոռիի մարզի Վանաձոր քաղաքի ՀՀԿ ընտրական շտաբի ղեկավար Վարդան Մնացականյանը ընտրակաշառք է բաժանել (յուրաքանչյուր ձայնի դիմաց տրամադրելով 10 հազարական դրամ), ինչպես նաև պետական մարմիններում աշխատող քաղաքացիներին և նրանց ընտանիքի անդամներին պարտադրել է մասնակցել ընտրությանը, և իրենց ձայնը տալ ՀՀԿ-ին: Ոստիկանության կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են վերցվել Վ. Մնացականյանից և ՀՀԿ համապատասխան շտաբի այլ աշխատակիցներից, ինչպես նաև նյութերով ձեռք են բերվել այլ փաստական տվյալներ, որոնցով հերքվել է հաղորդման մեջ նշված փաստերի առկայությունը, ինչի արդյունքում կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության հիմքով:

Լրատվական կայքէջերից մեկում տեղադրված տեսահոլովակում ներկայացվել է, որ 3/22 ընտրական տեղամասի դիմաց ընտրակաշառք է բաժանվում: Սույն խնդրի վերաբերյալ Պաշտպանի՝ Ոստիկանությանն ուղղված գրությանն ի պատասխան հայտնել են, որ դեպքի կապակցությամբ Ոստիկանության կողմից կայացվել է որոշում նյութեր

նախապատրաստելու վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացրել են, որ նշանակվել է դատաձայնատեսագրային փորձաքննություն, որի արդյունքները դեռևս պարզ չեն:

Ահազանգ է ստացվել թիվ 12 ընտրատարածքում առաջադրված «ՕԵԿ» թեկնածու Ռուբեն Մասունյանը յուրաքանչյուր շենքից 30 ձայն ստանալու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների միջոցով յուրաքանչյուր ընտրողի համար 5000-ական դրամ է նախատեսում վճարել: Այս խնդրի կապակցությամբ Ոստիկանությունից տեղեկացրել են, որ մայիսի 6-ին սույն հաղորդման վերաբերյալ Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում կատարված հետաքննության ընթացքում բացատրություններ են վերցվել Ռ. Մասունյանից և այլ անձանցից, ովքեր հայտնել են, որ վերոնշյալ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Հետագայում Ոստիկանության կողմից կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ըստ մեկ այլ ահազանգի, Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը՝ 9 տարի ժամկետով ազատազրկման դատապարտվածի հորը խոստացել է ՀՀԿ-ի օգտին 1000 ձայն հավաքելու դեպքում ա/թ մայիսի 15-ին ազատ արձակել իր որդուն: Ոստիկանության բաժին ստացված նշված հաղորդման կապակցությամբ կատարված հետաքննության արդյունքում բացատրություններ են վերցվել Սևակ Խաչատրյանի հայր Սմբատ Խաչատրյանից, ինչպես նաև Գեղաշեն գյուղի նախընտրական շտաբի աշխատակիցներից, ովքեր հայտնել են, որ վերոնշյալ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, ուստի կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վարչական ռեսուրսի օգտագործում

Բացի վերը նշված ընտրակաշարքի դեպքերից, արձանագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են նախընտրական քարոզարշավի իրականացման ընթացքում թեկնածուների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից վարչական ռեսուրսների չարաշահմանը: Ընտրական օրենսգիրքը արգելում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է թվով 5 ահազանգ, որոնք վերաբերել են վարչական ռեսուրսների չարաշահման դեպքերին, ահազանգերից 3-ը հերքվել են ԿԸՀ-ի կողմից ստացված պատասխան գրություններով, իսկ 2-ի քննարկման արդյունքում ընտրախախտումները վերացվել են:

Այսպես, քաղաքացի Ա.Բ.-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով հայտնել է, որ ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի գյուղապետարանի շենքին փակցված է ՀՀԿ գովազդային պաստառ, ինչը արձանագրել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Սյունիքի մարզի տարածքային

Արտահերթ զեկուլյցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի իր ժամանակատև և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկուլյցների հիման վրա:

գրասենյակի աշխատակիցներ: Այդ կապակցությամբ ԿԸՀ նախագահը տեղեկացրել է, որ նշված իրավախախտումը վերացվել է Սյունիքի համայնքի ղեկավարության կողմից:

Պաշտպանը ստացել է ահազանգ, համաձայն որի՝ Տավուշի մարզի Այգեձոր համայնքում Հայաստանի Հանրապետական կուսակցության քարոզարշավին մասնակցելու նպատակով համայնքի դպրոցների և բուժհաստատությունների աշխատանքները դադարեցվել են: Այդ խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ից հայտնել են, որ մանկապարտեզների, դպրոցների և բուժհաստատությունների աշխատանքները երբևէ չեն դադարեցվել:

Զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումների համաձայն՝ Արարատի մարզի Մրգավան գյուղում ՀՀԿ նախընտրական շտաբը, գյուղապետարանը և ընտրատեղամասը գտնվել են նույն շենքում, ՀՀԿ շտաբ է գործել նաև Բերդի քաղաքային գրադարանում: Նշված խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ին ուղղված գրություններին ստացված պատասխանների համաձայն՝ վերոնշյալ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Արձանագրվել են նաև 2 ահազանգ, երբ կրթական հաստատությունները օգտագործվել են նախընտրական քարոզչություն իրականացնելու համար: Ստացված տեղեկատվության համաձայն՝ սույն թվականի ապրիլի 18-ին ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում Հայաստանի Հանրապետական կուսակցության քարոզարշավին մասնակցելու նպատակով քաղաքի մի շարք հիմնական դպրոցների (մասնավորապես թիվ 3 ավագ դպրոց) բնականոն գործունեությունը դադարեցվել է: Այս հանգամանքը արձանագրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Վայոց Ձորի մարզի տարածքային գրասենյակի աշխատակցի կողմից իրականացրած արագ արձագանքման արդյունքում, սակայն տեղեկատվություն տրամադրած անձը հրաժարվել է դիմում գրել նշված դեպքի կապակցությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ գրություն է ուղարկվել ՀՀ կրթության և գիտության նախարարին, որի կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտնել է, որ համապատասխան գրություններ են ուղարկվել Երևանի քաղաքապետին, ՀՀ մարզպետներին, Կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գտնվող ուսումնական հաստատությունների տնօրեններին և պահանջել, որպեսզի ուսումնական հաստատություններում արգելվեն քաղաքական գործունեությունն ու քարոզչությունը:

Լրագրողների, դիտորդների, վստահված անձանց գործունեության խոչընդոտում

Ստացվել է շուրջ 12 ահազանգ ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամների, դիտորդների, վստահված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների գործունեության խոչընդոտման և նրանց նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ: Մասնավորապես՝ 12/33 ընտրատեղամասի մոտ «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Զիլինգարյանի նկատմամբ բռնություն է գործադրվել մի խումբ երիտասարդների կողմից այն պահին, երբ նա փորձել է տեսանկարահանել ընտրատեղամասը: Նույն աղբյուրից ստացված տեղեկատվության

22
Արտահերթ զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, մամուլի և արժանախախտ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների հիման վրա:

համաձայն Էլինա Չիլինգարյանը հրավիրվել է ոստիկանություն և ցուցմունք է տվել այդ միջադեպի մասին: Է. Չիլինգարյանի նկատմամբ բռնության դեպքի վերաբերյալ Ոստիկանության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով գրություն է ուղարկվել Ոստիկանություն, որին ի պատասխան Ոստիկանությունը հայտնել է, որ վերոնշյալ փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, և նշանակվել է փորձաքննություն, սակայն փորձաքննության արդյունքները շուրջ մեկ ամիս է ինչ պարզ չեն: Ոստիկանությունը հայտնել է նաև, որ այդ գործով մեղադրանք դեռ չի առաջադրվել:

Մեկ այլ տեղեկատվության համաձայն Շիրակի մարզի թիվ 34/26 ընտրատեղամասում 5-6 անձանոթ երիտասարդներ լրագրող Կարեն Ալեքյանի նկատմամբ բռնություն են գործադրել, և նրա ձեռքից վերցրել նրան կցված տեսախցիկը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Շիրակի տարածքային գրասենյակի արագ արձագանքման աշխատակիցները արձանագրել են նշված խախտումը: Սույն դեպքի կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունից հայտնել են որ՝ տեսախցիկը Կ. Ալեքյանից առգրավվել և ներկայացվել է դատաապրանքագիտական փորձաքննության: Նշված փորձաքննության արդյունքները դեռևս պարզ չեն:

Ահագանգ է ստացվել նաև, որ թիվ 7/09 ընտրատեղամասում ոստիկանության աշխատակիցները բռնություն են գործադրել հանձնաժողովի նախագահի վրա: Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խումբը այցելելով 7/09 ընտրատեղամաս՝ հանձնաժողովի անդամներից պարզել է, որ այդ տեղեկությունը չի համապատասխանել իրականությանը:

Թիվ 18/29 ընտրական տեղամասում ընտրական հանձնաժողովի նախագահը պատգամավորության թեկնածու Իշխան Խաչատրյանի վստահված անձ հանդիսացող Ելենա Թովմասյանին ընտրական տեղամասից դուրս է հանել վիճարկության պատճառով: Խնդրի կապակցությամբ ԿԸՀ-ին ուղղված գրության պատասխանի համաձայն՝ այդ վստահված անձի կողմից ԿԸՀ ներկայացրած դիմումի վերաբերյալ կայացվել է վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հիմնավորելով, որ Ընտրական օրենսգրքի համաձայն քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Քաղաքացի Ա.Ա.-ն հայտնել է, որ Ջուլաքար համայնքի թիվ 24/26 ընտրատեղամասում ծեծի են ենթարկել և տեղամասից դուրս հանել ԲՀԿ վստահված անձանց, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության անդամներին, իսկ ԲՀԿ անդամ հանդիսացող օպերատորի ձեռքից վերցրել և կոտրել են տեսախցիկը: Այս խնդրի կապակցությամբ գրություն է ուղարկվել Ոստիկանություն, որի կապակցությամբ Ոստիկանությունը հայտնել է, որ Ջուլաքար գյուղի բնակիչ Բ.Բ.-ն՝ խախտելով քաղաքացիների գաղտնի քվեարկության իրավունքը, տեսանկարահանել է քվեախցում ընտրելու ժամանակ: Ոստիկանության կողմից կատարված օպերատիվ-միջոցառումների արդյունքում բացատրություններ են վերցվել ՀԱԿ և ԲՀԿ վստահված անձանցից, ովքեր

հայտնել են, որ որևէ բռնություն իրենց հանդեպ չի եղել, և նույնը հաստատել են նաև հանձնաժողովի անդամները: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ոստիկանությունում կայացվել է որոշում քրեական գործը կարճելու վերաբերյալ՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Թիվ 24 ընտրատարածքի որոշ ընտրատեղամասերում արձանագրված այլ ընտրախախտումների վերաբերյալ ԿԸՀ-ից հայտնել են, որ թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից նշված տեղամասերն այցելելուց հետո պարզ է դարձել, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Պաշտպանի կողմից ստացված բողոքի համաձայն՝ 19:45-ի սահմաններում 28/04 ընտրական տեղամասի դռները փակ են եղել և դիտորդին թույլ չեն տվել մտնել ընտրատեղամաս: Այդ ահազանգի կապակցությամբ ԿԸՀ-ից հայտնել են, որ դիտորդի իրավունքների խախտման կամ սահմանափակման վերաբերյալ որևէ ահազանգ, դիմում-բողոք ընտրատարածքային ընտրական հանձնաժողով չի ներկայացվել:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները

Ի տարբերություն նախորդ ընտրությունների, երբ զանգվածային բնույթ էին կրում լցոնումները, ձայների հաշվարկի ընթացքում կեղծումները, բռնությունները, բազմակի քվեարկությունները, այս ընտրությունները էականորեն և դրականորեն տարբերվեցին: Բոլոր արձանագրված խախտումներից ամենամտահոգիչը եղել է ընտրակաշառքի բաժանման երևույթը: Հանրության որոշ մասի համոզմամբ ընտրակաշառքի դեպքերը եղել են զանգվածային: Չնայած նման համոզմանը, այդ մասին փաստող ապացույցները և հիմնավոր վկայությունները բացակայում են: Ընտրակաշառքների վերաբերյալ արձանագրված շուրջ հարյուր ահազանգերի ծանրակշիռ մասը իրավապահ մարմինների կողմից ճանաչվել է անարժանահավատ: Ընտրակաշառքների բաժանման իրական ծավալների բացահայտման պարտականությունը կրում են հենց իրավապահ մարմինները, այնինչ վերը թվարկված գրեթե բոլոր դեպքերով ոստիկանության և դատախազության աշխատանքի արդյունքները խիստ միատեսակ են և չափազանց անբավարար: Նման գործելաճճը չի կարող կանխել ընտրակաշառքի բաժանման դեպքերը հաջորդ ընտրություններին և էականորեն նվազեցնում է հանրության վստահությունը այդ մարմինների ու ընտրությունների արդյունքների նկատմամբ:

Վարչական ռեսուրսի կիրառման ահազանգերը այս ընտրություններին չեն կրել զանգվածային բնույթ և հետևաբար հնարավոր չէ փաստել, որ վարչական ռեսուրսի կիրառումը էական ազդեցություն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա:

Չափազանց ողջունելի է, որ էականորեն նվազել են դիտորդների, վստահված անձանց, լրագրողների և ընտրական գործընթացների այլ մասնակիցների գործունեությանը խոչընդոտելու դեպքերը և նրանց նկատմամբ բռնությունները: Այդուհանդերձ, խիստ դատապարտելի են հատկապես երկու լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունները, որոնց մեղավորները պետք է շուտափույթ բացահայտվեն և պատժվեն օրենքի ողջ խստությամբ: Քննության և փորձաքննությունների դանդաղությունը անընդունելի է հատկապես նման կարևոր գործերի պարագայում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքների խախտման, ինչպես նաև ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու վերաբերյալ ՀՀ դատարաններում ստացվել է շուրջ 37 հայցադիմում: ՀՀ վարչական դատարան տացված 17 հայցադիմումներից 8-ի ընդունումը մերժվել է, 3-ը՝ վերադարձվել են, իսկ մնացած 6-ը՝ ընդունվել են վարույթ, որոնցով կայացվել են համապատասխան դատական ակտեր: ՀՀ վարչական դատարանում ստացված հայցադիմումները հիմանականում վերաբերել են ընտրական հանձնաժողովների կողմից որպես պատգամավորի թեկնածու գրանցելու և/կամ չգրանցելու, կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների բողոքարկմանը, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված վեճերին: ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ընտրողների ցուցակներից հանելու, ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ ստացվել է 20 հայցադիմում, որոնցից 2-ը բավարարվել են, 2-ը՝ վերադարձվել են, 3-ի ընդունումը՝ մերժվել է, 13-ը՝ ընդունվել է վարույթ: Վարույթ ընդունված 13 հայցադիմումներից 6-ով պահանջները մերժվել են, 7-ով՝ բավարարվել և համապատասխան անձանց իրավունք է վերապահվել ընդգրկվելու համապատասխան լրացուցիչ ընտրական ցուցակում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտնած տեղեկատվության համաձայն՝ ընտրախախտումների վերաբերյալ ԿԸՀ ստացվել է 531 դիմում-բողոք, որից 487-ը ներկայացվել են մեկ անձի կողմից: Նշված դիմումների կապակցությամբ ԿԸՀ-ի հայտնած դիրքորոշման համաձայն՝ բոլոր դիմումներին տրվել է պատշաճ ընթացք, և դիմումատուն իրավունք է ունեցել կայացված որոշումները բողոքարկել դատական

կարգով: Վարչական դատարան է ստացվել ընտամենը 7 հայցադիմում, ավելին, որևէ դատական ակտով ԿԸՀ-ի կայացրած որոշումները ոչ իրավաչափ չեն ճանաչվել դատարանի կողմից:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքը մայիսի 18-ին դիմել է Սահմանադրական դատարան Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 265-Ա որոշումը վիճարկելու համար: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2012 թվականի մայիսի 19-ի աշխատակարգային նիստում, քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելության հարցը, կայացրել է գործը քննության ընդունելու և գործով որպես պատասխանող կողմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներգրավելու վերաբերյալ որոշում: Դիմող կողմի պնդումների համաձայն՝ ընտրությունների անցկացման կարգը խախտվել է պետական պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ ՀՀ նախագահի և Վարչապետի կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու համար վարչական ռեսուրսների օգտագործումը չարաշահելու միջոցով, ինչը, ըստ դիմողի, հակասում է Սահմանադրությանը: Դիմողը նաև նշել է, որ ընտրությունների վերջնական արդյունքների վրա էական ազդեցություն են ունեցել նաև ընտրացուցակներում առկա անճշտությունները, ինչպես նաև քվեարկության օրը ընտրողների անձը հաստատող փաստաթղթերում դրվող դրոշմակնիքների արագ անհետացման փաստը: ԿԸՀ-ի ներկայացրած առարկությունների համաձայն՝ վարչական ռեսուրսի օգտագործման հետ կապված խնդրի առկայության դեպքում դիմողը կարող էր օրենքով սահմանված կարգով բողոքարկել այն, իսկ օրենքի նորմերի սահմանադրականության հարցի բարձրացումը դուրս է նշված վեճի առարկայի շրջանակներից: Դրոշմակնիքների շուտ անհետացման խնդրի վերաբերյալ ԿԸՀ-ն հայտնել է, որ նշված խախտումը կրել է մասնակի և տեխնիկական բնույթ, ինչը ԿԸՀ-ի միջամտության արդյունքում շտկվել է: Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմողի դիտարկումները ԿԸՀ-ն գնահատում է որպես առանց փաստարկի դատողություններ և գտնում է, որ դիմողը կարող էր ընտրացուցակների հարցն օրենքով սահմանված կարգով վիճարկել քվեարկությանը նախորդող փուլում, ինչը չի արվել: Ելնելով գործի քննության արդյունքներից՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը մայիսի 31-ին /ՄԴՈ-1028/ որոշեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի թիվ 265-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2012 թվականի մայիսի 16-ին ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով թիվ 9, թիվ 3 և թիվ 37 ընտրատարածքներում համապատասխանաբար պատգամավորի թեկնածուներ առաջադրված Լ. Զուրաբյանը, Մ. Գասպարյանը և Ս. Հարությունյանը Սահմանադրական դատարան են դիմել անվավեր ճանաչելու վերոնշյալ ընտրատարածքներում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից 2012 թվականի մայիսի 11-ին կայացված «Ազգային ժողովի

մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 23-Ա, թիվ 16-Ա և թիվ 31-Ա որոշումները: Մահմանադրական դատարանը իր ՄԴՈ-1029, ՄԴՈ-1030 և ՄԴՈ-1031 որոշումներով ուժի մեջ է թողել Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վերոնշյալ վիճարկվող որոշումները, իսկ ՄԴԱՈ-35 որոշմամբ 2012 թվականի հունիսի 15-ին կասեցվել է ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Նիկոլ Փաշինյանի դիմումի հիման վրա «ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշման հետ կապված վեճով» գործի վարույթը:

Պաշտպանի դիտարկումներն ու գնահատականները

Ընտրություններին մասնակցող բոլոր սուբյեկտները ունեցել են իրական և մատչելի հնարավորություն բողոքարկելու իրենց շահերը շոշափող մարմինների որոշումները: Բողոքարկման բոլոր ատյանները գործել են ողջամիտ ժամկետներում և պահպանել են օրենքի պրոցեսուալ պահանջները: Բողոքարկման գործընթացներում դատավարական և նյութական նորմերի խախտման վերաբերյալ բացասական գնահատականների և գանգատների բացակայությունը կարող է վկայել բողոքարկման մեխանիզմների արդյունավետության մասին: Չնայած՝ տարակուսելի է պետական բոլոր մարմինների համահունչ և միակարծիք արձագանքը գրանցված բոլոր միջադեպերի և խնդիրների վերաբերյալ:

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

«Ընտրություններից անմիջապես հետո շատերը (լրագրողներ, գործընկերներ, ընկերներ) հարցնում էին, թե որն է այս ընտրությունների իմ գնահատականը: Ոմանք կարող են ակնկալել «երկու բառով» գնահատական, որին հայտնի միջազգային դիտորդական կազմակերպությունները տարիներ շարունակ վարժեցրել են մեր հանրության գիտակցությունը: «Ազատ և արդար» կամ «մասամբ ազատ և մասամբ արդար», բառակապակցությունները չեն կարող իրապես արտացոլել այն կարևոր ու բազմաշերտ հիմնահարցերը, զարգացումները, բացթողումները, վերլուծությունները և նույնիսկ զգացումները, որ ծագում են ամեն ընտրական շրջանից հետո: Հենց այդ պատճառով, ես հրաժարվում եմ երկբառանի գնահատականներից և ներկայացնում եմ այս ծավալուն զեկույցը՝ առանձին խնդիրների վերաբերյալ իմ կոնկրետ դիտարկումներով, որոնք հնարավոր է օգտակար լինեն անցյալ ընտրությունների իմաստավորման և հաջորդ ընտրություններում նոր առաջընթաց գրանցելու համար»:

Կարեն Անդրեասյան
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան